CONVERSE BANK

TRUSTED BY GENERATIONS

«26» 09 2025

№ COD/2399

Հավելված №2
«25» «09» 2025թ. կնքված
№ COP 17-ԾՁԲ-26/01 ծածկագրով պայմանագրի

ԵՐԱՇԽԻՔ N COD/2399
(կանխավճարի վերադարձի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեն, ի դեմս՝ կոմիտեի նախագահ՝ Առնակ Ավետիսյանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՄԵՐԻԴԻԱՆ ՀՈԼԴԻՆԳ» փակ բաժնետիրական ընկերության՝ ի դեմս՝ տնօրեն Ս. Մանուկյանի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև կնքված N COP 17-ԾՁԲ-26/01 պայմանագրի 1.8, 2.5 և 4.8 կետերով նախատեսված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **5,775,000,000.00 (հինգ միլիարդ յոթ հարյուր յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900011059814 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է բենեֆիցիարի և պրինցիպալի միջև կնքված N COP 17-ԾՁԲ-26/01 պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև նույն պայմանագրի 4.11-րդ կետով սահմանված օրը:

Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև բենեֆիցիարի info@spm.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N COP 17-ԾՁԲ-26/01 պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները .

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարգանքով,

Իրավասու անձ

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ, 00000291
ԵՐԵՎԱՆ, Վ. ՍԱՐԳՅԱՆ 26/1
Վարկային գործառնությունների համար
Վարկային գործառնությունների պետ
Head of Credit Operations
Արշակ Խոջոյան
Arshak Khojoyan
For Credit Operations
26/1 V. SARGSYAN str., YEREVAN
CONVERSE BANK CJSC, 00000291

Պատասխանատու՝ Նարինե Ղալումյան/Ներքին հեռախոսահամար՝ 2225